ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան – 2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АННА РАЗМИКОВНА МАРГАРЯН

КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени доктора

юридических наук по специальности 12.00.05- “Уголовное право, криминология, уголовно-исполнительное право”

ЕРЕВАН - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական խորհրդատու՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Գաբուզյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Վ. Առաքելյան
իրավ. գիտ. դոկտոր Ա.Ա. Թամազյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2017թ.-ի դեկտեմբերի 28-ին, ժամը 14^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի Իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2017թ.-ի նոյեմբերի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный консультант: доктор юридических наук, профессор А.А.Габузян

Официальные оппоненты:
доктор юридических наук, профессор С.С. Аветисян
доктор юридических наук, профессор С.В. Аракелян
доктор юридических наук А.А.Тамазян

Ведущая организация: Образовательный Комплекс Полиции РА

Защита состоится 28 декабря 2017г., в 14^{00} часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 28 ноября 2017 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент А.А. Манасян

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վերջին երեք տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում տեղ գտած սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացները, հասարակության նախկինում եղած արժեքային համակարգի փլուզումը և դրա արդյունքում ձևավորված սոցիալական անոմիան, օրենքի, իրավապահ մարմինների և արդարադատության հանդեպ վստահության պակասը, հասարակության անդամների մեծամասնության մոտ անվստահությունը ներկայի ու ապագայի հանդեպ իրենց անմիջական ազդեցությունն ունեցան հասարակության անդամների և հատկապես՝ երեխաների վարքագծի ձևավորման վրա:

Հասարակական կյանքի պետական միջամտություն ենթադրող ոլորտներում, մասնավորապես՝ կրթության ոլորտում, անընդհատ տեղի ունեցող, սակայն ավելի շատ փորձարկման բնույթ կրող բարեփոխումները, անչափահասների դաստիարակման գործընթացում սոցիալական ինստիտուտների ներգործության թուլացումը, երեխաների ազատ ժամանցի կազմակերպմանը պետության գրեթե անմասն մնալը, անչափահասների և երիտասարդների մոտ առաջացած հոգևոր վակուումը և իրավական նիհիլիզմը նպաստավոր պայմաններ ստեղծեցին երեխաների շեղվող (դեվիանտ) և հանցավոր վարքագծի դրսևորման համար:

ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 1993 թ.-ի համեմատ 2016 թ.-ին 100 000 բնակչի հարաբերակցությամբ հանցավորության գործակիցը աճել է գրեթե 2 անգամ՝ 349,2-ից դառնալով 628,3, մինչդեռ ՀՀ անչափահասների հանցավորության գործակիցը նման ինտենսիվ աճ չի գրանցել և 11.7-ից դարձել է 12.6: Այնուհանդերձ, թե՛ փորձագիտական գնահատականները, թե՛ երեխաների կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու վերաբերյալ ԶԼՄ հրապարակումները, թե՛ աղքատության, գործազրկության, բնակչության կազմի փոփոխության վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները տեղիք են տալիս կասկածի տակ առնելու ներկայացված տվյալների արժանահավատությունը և հիմք են տալիս մտածելու, որ անչափահասների հանցավորությունը պարզապես դառնում է առավել լատենտային:

Միաժամանակ, հասարակական կյանքում տեղ գտնող ճգնաժամային փոփոխությունները, ինչպես նաև գլոբալիզացման գործընթացում ՀՀ առավել ու առավել ներգրավվածությունը հանգեցնում են անչափահասների հանցավորության որակական փոփոխությունների. նկատվում է իգական սեռի անչափահասների հանցավոր վարքագծի ակտիվացում, ավելի ցածր տարիքային խմբերի երեխաների կողմից դեվիանտ վարքագծի դրսևորում, երեխաների կողմից բռնության առավել հաճախ գործադրում:

Անչափահասների կողմից հանցավոր կամ դեվիանտ վարքագծի դրսևորման վիճակը պետությունում և հասարակությունում առկա սոցիալական, տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական, կառավարչական խնդիրների բացահայտման յուրօրինակ լակմուս է, հետևաբար դրա ուսումնասիրությունը առանձին կարևորություն ունի հատկապես ներկա ժամանակաշրջանում, երբ ՀՀ պաշտոնական վիճակագրությամբ ներկայացվում են ՀՀ սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարումը վկայող ցուցանիշներ, սակայն իրավական վիճակագրությունը և հանցավորության վիճակի վերաբերյալ այլընտրանքային աղբյուրները լիովին այլ պատկեր են բացահայտում:

Միաժամանակ, անչափահասների հանցավորության վիճակի, հանցավոր կամ դեվիանտ վարքագիծ դրսևորած անչափահասի կրիմինալոգիական բնութագրի, նշված վարքագծի պատճառ կամ պայման հանդիսացող գործոնների ուսումնասիրությունը թույլ է տալիս մշակել արդյունավետ միջոցառումներ ոչ միայն անչափահասների հանցավորության և դեվիանտ վարքագծի կանխարգելման առումով, այլև արդեն իսկ կարճաժամկետ՝ 4-5 տարվա կտրվածքով կանխատեսումներ անել չափահասների հանցավորության սպասվելիք քանակական և որակական փոփոխությունների վերաբերյալ և մշակել նաև դրանց արձագանքման արդյունավետ միջոցառումներ:

Վերոգրյալը վկայում է ընտրված թեմայի արդիականության մասին:

***Թեմայի մշակվածության աստիճանը**:* Անչափահասների հանցավորությունը, նրանց կողմից շեղվող վարքագծի դրսևորումները և դրանց պատճառ հանդիսացող գործոնները, անչափահաս հանցավորի անձի, նրանց վարքագծի մոտիվացիոն առանձնահատկությունները մշտապես գտնվել են և շարունակում են գտնվել հոգեբանության, մանկավարժության, իրավունքի, կրիմինալոգիայի, սոցիոլոգիայի ոլորտում հետազոտություններ իրականացնող գիտնականների ուշադրության կենտրոնում: ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Եվրոպական երկրներում բազմաթիվ աշխատանքներ են իրականացվել քննարկվող հիմնախնդրի ուսումնասիրության ուղղությամբ, մասնավորապես՝ Ա.Ի. Դոլգովայի, Ս. Պ. Մինինայի, Յու. Մ. Անտոնյանի, Վ.Վ. Լունեևի, Ս. Վ. Օվչիննիկովայի, Ե.Գ. Զինչուկի, Դ.Ա. Շեստակովի, Յ. Յունգեր-Տասի, Մ. Սթեքեթեի, Մ. Կիլիասի, Ու. Գատիի, Ի. Մարշալի և այլոց կողմից: Այնուհանդերձ, կատարված ուսումնասիրությունները, թեև բացահայտում են անչափահասների շեղվող վարքագծի առանձնահատկությունները, սակայն դրանք ոչ միշտ են վերաբերելի ՀՀ իրականությանը:

ՀՀ-ում քննարկվող հիմնախնդիրը, հատկապես վերջին տարիներին, համալիր հետազոտության չի ենթարկվել. առանձին ուսումնասիրություններ իրականացվել են Ա. Հ. Գաբուզյանի, Տ.Վ.Սիմոնյանի, Ս.Վ.Առաքելյանի, Ս.Ջ.Արզումանյանի կողմից, այնուհանդերձ դրանցով ատենախոսության թե-

ման չի սպառվել և բազմաթիվ հարցերի անդրադարձ չի կատարվել: Միաժամանակ, անչափահասների հանցավորությունը, հասարակությունում տեղ գտնող գործընթացներին զուգընթաց, անընդհատ դինամիկ վիճակում է, ենթարկվում է քանակական և որակական փոփոխությունների, ուստի դրա վիճակի, հանցավոր վարքագիծ դրսևորող անչափահասի սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-հոգեբանական, մոտիվացիոն ոլորտի առանձնահատկությունների, անչափահասների հանցավորությունը կամ շեղվող վարքագիծը դետերմինացնող գործոնների ուսումնասիրությունը կարևոր է՝ դրանում տեղ գտած փոփոխությունները վեր հանելու և դրանց արդյունավետ արձագանքելու համար:

ՈՒսումնասիրության նպատակն ու խնդիրները*:* Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության կրիմինալոգիական բնութագրի ուսումնասիրությունն է՝ դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների մշակման համար:

Ուսումնասիրության խնդիրներն են՝

1. վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա գնահատել Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի արդի վիճակը,

2. բացահայտել ՀՀ-ում հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի կրիմինալոգիական բնութագիրը,

3. գնահատել անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում վճռորոշ նշանակություն ունեցող դերակատարների՝ ընտանիքի, դպրոցի, ընկերական միջավայրի և սոցիալական միկրոմիջավայրի ազդեցությունը երեխաների շեղվող վարքագծի ձևավորման վրա,

4. քննարկել ՀՀ-ում անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու հիմնական մոտեցումները,

5. ուսումնասիրելով անչափահասների հանցավորության պատճառ կամ պայման հանդիսացող գործոնները՝ առաջարկություններ մշակել՝ ուղղված ՀՀ-ում անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողության կատարելագործմանը:

Ատենախոսության օբյեկտը եվ առարկան*:* Հետազոտության օբյեկտը ՀՀ-ում անչափահասների հանցավորությունն ու շեղվող վարքագծի դրսևորումներն են, որպես ինքնուրույն սոցիալ-իրավական երևույթ, ինչպես նաև դրանց պատճառ հանդիսացող գործոնները, դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելուն ուղղված միջոցառումները:

Հետազոտության առարկան են կազմել իրավախախտ կամ շեղվող վարքագիծ դրսևորած երեխաների իրավունքները և պարտականությունները կանոնակարգող միջազգային իրավական փաստաթղթերը, ՀՀ քրեական, քրեակատարողական օրենսդրության դրույթները, դրանց կիրառման պրակտիկան, ՀՀ պաշտոնական վիճակագրությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքն են կազմել գիտականորեն հիմնավորված և գործնականում կիրառվող ընդհանուր (սոցիալական երևույթների և գործընթացների ճանաչման դիալեկտիկական, համակարգային) և մասնավոր (տրամաբանական, համեմական, համակարգակառուցվածքային, սոցիոլոգիական) մեթոդները:

Փորձառնական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են նաև վիճակագրական տվյալների վերլուծության, փաստաթղթերի հետազոտության, հարցազրույցի, անկետավորման, համեմատական-իրավական վերլուծության մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքն են կազմել քրեական, քրեակատարողական իրավունքների, կրիմինալոգիայի, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի ոլորտներում գիտական ուսումնասիրություններ իրականացրած հայ և օտարերկրյա հեղինակների մի շարք աշխատություններ՝ մենագրություններ, ատենախոսություններ, գիտական հրապարակումներ, ուսումնական ձեռնարկներ, գիտական ու գործնական այլ նյութեր, զեկույցներ:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Ատենախոսության նորմատիվ հիմքն են կազմել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի, «Նվազագույն տարիքի մասին» կոնվենցիաները, «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները, Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները, Եվրոպական քրեակատարողական կանոնները, «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները, ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թ.-ի ապրիլի 23-ի ՍԴՈ-1082 որոշումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի և 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ և այլ իրավական ակտեր:

Հետազոտության փորձառնական հիմքը*:* Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել Կրիմինոլոգների եվրոպական միության նախաձեռնությամբ 30-ից ավելի երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, 12-17 տարեկան 2100 դպրոցականների շրջանում միասնական հարցաթերթիկով 2006 թ.-ին իրականացված ISRD-2 և 2014 թ.-ին 1060 դպրոցականների շրջանում անցկացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքները: Ատենախոսության փորձառնական հիմքն են կազմել նաև «Աբովյան» քրեակատարողական հիմ-

նարկում պատիժ կրող ինը անչափահաս դատապարտյալների հետ 2015-2016 թթ.-ին անցկացված հարցազրույցները:

Ներկայացված ուսումնասիրության արդյունքների հավաստիությունը և իրականացված ատենախոսական հետազոտության հետ համադրելիությունն ապահովելու նպատակով ուսումնասիրվել, վերլուծվել և օգտագործվել են անչափահասների հանցավոր և շեղվող վարքագծի վերաբերյալ այլ հեղինակների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

ՈՒսումնասիրության գիտական նորույթը: Ներկայացված աշխատանքով առաջին անգամ ավարտուն մենագրության ձևով, համակարգային վերլուծության է ենթարկվում ներկա ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի կրիմինալոգիական բնութագիրը:

Աշխատանքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության արդի վիճակը և վերջին տասնամյակում դրանում տեղ գտած փոփոխությունները, հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի առանձնահատկությունները, անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի պատճառ հանդիսացող գործոնները, դրանց կրիմինոգեն ազդեցության չեզոքացմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

1. Թեև ՀՀ-ում պաշտոնապես գրանցվում է անչափահասների հանցավորության նվազում, սակայն դա ոչ թե կապված է իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքի, անչափահասների արժեքային համակարգի, բարոյական հայացքների բարելավման, այլ անչափահասների հանցավոր վարքագծի լատենտայնության մեծացման և բնակչության զանգվածում անչափահասների մասնաբաժնի նվազման հետ: Հետևաբար՝ անչափահասների հանցավորությունը ոչ թե նվազում է, այլ դառնում առավել լատենտային: Ավելին, այն ենթարկվում է որակական բացասական փոփոխությունների. անչափահասների շրջանում ավելանում է ինքնուրույն հանցավոր վարքագիծը, աճում է իգական սեռի ներկայացուցիչների հանցավոր ակտիվությունը, անչափահասների շրջանում առավել հաճախ է ապօրինի կերպով զենք շրջանառվում:

2. Թեև ՀՀ անչափահասները եվրոպական շատ երկրների համեմատ ավելի քիչ են շեղվող վարքագիծ դրսևորում և վիկտիմիզացիայի ենթարկվում, սակայն իրենց եվրոպացի տարեկիցներից ավելի հաճախ են նախընտրում բռնություն գործադրել:

Չնայած ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ վերջին 15 տարվա ընթացքում անչափահասների կողմից թմրանյութի գործածման, ապօրինի շրջանառությանը նրանց ներգրավվածության ցուցանիշները գրեթե չեն աճել, սակայն նշված ժամանակահատվածում Հայաստանում տեղ գտած բացասական փոփոխությունները՝ հատկապես՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումը, հասարակության խիստ բևեռացումը, գրեթե համատարած բնույթ կրող աղքատությունը, գործազրկությունը, արժեքային անոմիան, զուգակցվելով Իրանի հետ ՀՀ սահմանների բացման, թմրանյութերի գործածման համար քրեական պատասխանատվության վերացման հետ՝ հիմք են տալիս ենթադրելու, որ ՀՀ-ում թմրանյութ գործածողների, այդ թվում թմրանյութ գործածող անչափահասների թվաքանակը աճում է:

3. Հայ ընտանիքներում ծնողների, և հատկապես՝ տատիկների և պապիկների անվերապահ նվիրվածությունը երեխային, երեխաներին «կուրորեն սիրելը», «երես տալը», մանկավարժական գիտելիքների պակասը, դաստիարակությունն իրականացնելիս միմյանց հակադրվելը ձևավորում է թողտվության մթնոլորտ, նպաստում երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորմանը, ինչի վկայությունը լիարժեք համարվող ընտանիքներում դաստիարակվող երեխաների շեղվող վարքագծի դրսևորմանը ավելի բարձր ներգրավվածությունն է:

4. ՀՀ-ում երեխաների շեղվող վարքագծի, հատկապես դրա հանրային բարձր վտանգավորություն չունեցող ձևերի դրսևորման առումով կարևոր դերակատարություն ունի ինքնավերահսկումը՝ անչափահասի ռիսկային վարքագծի դիմելու պատրաստակամությունը և հեդոնիստական գաղափարներին հետևելը:

5. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ-ում գրանցվել է երեխաների հետ ծնողների հուզական կապի և ընտանեկան հսկողության թուլացում, ինչն էլ իր անմիջական ազդեցությունն է ունեցել երեխաների շեղվող վարքագծի դրսևորման վրա: Թեև այլ երկրների համեմատ ՀՀ-ում ծնողների մոտ բարձր է երեխաների առօրյայի մասին տեղեկացվածությունը, սակայն այն հաճախ կրում է ձևական բնույթ. օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ ծնողներից շատերի մոտ բացակայում է երեխայի կյանքով, ձեռքբերումներով, ձգտումներով իրական հետաքրքրվածությունը, երեխային աջակցելը: ՀՀ-ում անչափահասի շեղվող կամ հանցածին վարքագծի ձևավորման վրա ներկայումս էական ազդեցություն ունի ծնողների՝ երեխային դաստիարակելու իրենց գործառույթին, մանկավարժական, հոգեբանական գիտելիքներին չտիրապետելը, երեխայի իրավունքները խախտելը:

6. Ինչպես և ընտանիքը, այնպես էլ դպրոցը, երեխային գիտելիքներ տալուց զատ, պետք է զբաղվի նաև երեխայի դաստիարակությամբ, դպրոցական տարիների ավարտին հետևող կյանքին նախապատրաստմամբ,

սակայն հասարակությունում և կրթական ոլորտում տեղ գտած փոփոխությունների արդյունքում երեխայի կյանքում կարևոր դերակատարություն ունեցող այս ինստիտուտները մեր երկրում ձախողել են երեխայի ձևավորման առումով կարևոր նշանակություն ունեցող այնպիսի գործառույթի իրականացում, ինչպիսին է ապագայի առումով նրանց կողմնորոշելը: ՀՀ անչափահասների շրջանում, ի համեմատ եվրոպական այլ երկրների, մեծ թիվ են կազմում ապագայի առումով կողմնորոշում չունեցող անձինք, մինչդեռ ապագայի առումով անորոշությունը բարձրացնում է երեխայի կողմից հետագայում հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

7. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ երեխաները, հասարակության ազատականացման և ընտանեկան, սոցիալական հսկողության թուլացման պայմաններում, գրեթե 2 անգամ ավելի հաճախ են ազատ ժամանցն անցկացնում տանից, ընտանեկան հսկողությունից դուրս, այդ թվում՝ երեկոյան ժամերին, ալկոհոլ և թմրանյութ գործածում, ինչը բարձրացնում է նրանց կողմից շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

8. ՀՀ-ում սոցիալական հսկողությունը երեխայի շեղվող վարքագծի ձևավորման, դրսևորման առումով կանխարգելիչ ազդեցություն ունի, եթե երեխան գիտակցում է, որ հսկողություն իրականացնողը գտնվում է ոչ թե պասիվ դիտորդի դերում, այլ ամեն պահի կարող է ակտիվություն դրսևորել՝ միջամտել: Ցավոք, վերջին տասնամյակում ՀՀ-ում նվազել է այն անձանց թիվը, ովքեր պատրաստ են միջամտել իրենց կամ իրենց մերձավորների շահերը անմիջականորեն չոտնահարող իրավիճակներին:

9. Անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի կանխարգելման, դրան արդյունավետորեն արձագանքելու համար հրատապ է ՀՀ գործող քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրության վերանայումը՝ առավելապես երեխայի շահերը, կարիքները հաշվի առնող, միջազգային փաստաթղթերի պահանջներին համահունչ կանոնակարգումներ և ընթացակարգեր նախատեսելու, անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի, քրեաիրավական արձագանքման այլ միջոցների համակարգը իրատեսական և անչափահասի ուղղման, նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու հնարավորություն ունեցող պատժատեսակներով և քրեաիրավական ներգործության այլ միջոցներով համալրելու նպատակով:

ՀՀ-ում անհրաժեշտ է ներդնել անչափահասների արդարադատության պահանջները արտացոլող ինստիտուցիոնալ համակարգ՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների տարիքային առանձնահատկություններին տիրապետող, նրանց իրավունքների շրջանակը հստակ պատկերացնող կադրերի, մասնավորապես՝ դատավորների, դատախազների, քննիչների, ոստիկանների, փաստաբանների, քրեակատարողական հիմնարկների, պրոբացիոն ծառայության աշխատակիցների ընտրությանը, անհրաժեշտության դեպքում՝ պատրաստմանն ու վերապատրաստմանը:

10. Ընտանիքում առկա խնդիրները իրենց անմիջական ազդեցությունն են գործում անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի ձևավորման վրա, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երեխաների հետ համատեղ ապրող չափահասներին, հատկապես ծնողներին, մանկավարժական, հոգեբանական տարրական գիտելիքներ տալուն, դաստիարակման նրբություններին, ծնողական վերահսկողության առանձին դրսևորումների արդյունավետության կամ անարդյունավետության մասին տեղեկացնելուն:

11. Անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով կարևոր դերակատարություն ունի դպրոցը, ուսումնադաստիարակչական հաստատությունը, հետևաբար այս ոլորտում առկա խնդիրները նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է՝ վերանայել դպրոցական ծրագրերն ու դասագրքերը, հնարավորինս դրանք բեռնաթափել ու հետաքրքիր դարձնել երեխայի համար, իրականացնել միջոցառումներ ուսուցչի հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչն, առաջին հերթին, ենթադրում է դպրոցում կոռուպցիայի, մասնավոր պարապմունքների արատավոր պրակտիկայի վերացում, ինչպես նաև ուսուցիչներին զերծ պահելը քաղաքական գործընթացներից, վերացնել երեխաների անհարգելի բացակայությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը, նախատեսել հստակ, ազդեցիկ ներգործության միջոցներ՝ դպրոցից անհարգելի բացակայությունների համար:

12. Անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով կարևոր է ՀՀ-ում կանոնակարգել ազատ ժամանցի ոլորտը՝ ընդլայնել երեխաների համար նախատեսված, նրանց համար հասանելի, մատչելի սոցիոմշակութային հաստատությունների ցանցը, պետական բուջեում նախատեսել միջոցներ՝ անապահով ընտանիքների երեխաների՝ սպորտային, մշակութային, ստեղծագործական խմբակներ անվճար մուտքը ապահովելու համար, բոլոր երեխաների համար նախատեսել անվճար մուտք թանգարաններ, պատկերասրահներ, ինչպես նաև տարեկան կտրվածքով նախատեսել 4-5-ական անվճար այցելություն դասական երաժշտության (օպերա, բալետ, համերգ), մանկական համերգի կամ թատրոն, սահմանափակումներ նախատեսել՝ որոշակի հաստատություններում առանց ծնողի ուղեկցության երեխայի գտնվելու առումով, ինտերնետ ակումբներում արգելափակել երեխայի վրա բացասական ազդեցություն թողնող կայքեր անչափահաս հաճախորդների մուտքը, ալկոհոլի վաճառքի բոլոր կետերում ուժեղացնել հսկողությունը երեխաներին ալկոհոլ

վաճառելու արգելքի պահպանման նկատմամբ, խստացնել այդ արգելքը խախտելու համար նախատեսվող պատասխանատվությունը, ՁԼՄ-ների նկատմամբ նախատեսել ժողովրդավարական գրաքննություն:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ ներկայացված աշխատանքը ՀՀ-ում անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի արդի վիճակի վերաբերյալ ՀՀ-ում կատարված առաջին համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են հետագա ուսումնասիրությունների տեսական հիմք հանդիսանալ: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքները, դրանց վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդրության, հատկապես՝ քրեական, քրեակատարողական օրենսդրության կատարելագործման, ուսումնական գործընթացի բարելավման՝ ուսումնական նյութերի, գրականության պատրաստման նպատակներով, կիրառվել «Կրիմինալոգիա», «Անչափահասների արդարադատություն», «Քրեակատարողական իրավունք», «Հանցավոր վարքագծի մոտիվացիա», «Վիկտիմոլոգիա» դասընթացների դասավանդման ընթացքում:

Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել նաև իրավակիրառ պրակտիկայում՝ անչափահասների կողմից, նրանց նկատմամբ կամ նրանց ներկայությամբ կատարված գործերը քննելիս, անչափահասներին քրեական պատասխանատվության ու պատժի ենթարկելիս կամ դրանցից ազատելիս, ինչպես նաև անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու քաղաքականություն կամ առանձին միջոցառումներ մշակելիս:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ էլ անցկացվել է դրա քննարկումը և հավանություն է տրվել հիմնական դրույթներին, եզրահանգումներին ու առաջարկություններին:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրապարակումներում, Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում, ինչպես նաև ՀՀ-ում և արտասահմանյան մի շարք երկրներում կայացած գիտական կոնֆերանսներին ներկայացված զեկուցումներում:

Հետազոտության արդյունքները հաշվի են առնվել ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի մշակման ժամանակ, ինչպես նաև տեղ են գտել Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետում դասավանդվող առանձին դասընթացներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, տասը պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից և հապավումների ցանկից: Աշխատանքի ծավալը, առանց հավելվածի և հապավումների ցանկի, կազմում է 262 մեքենագիր էջ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը: Ատենախոսության ***ներածության*** մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, բացահայտված է աշխատության գիտական նորույթը, ցույց են տրված հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, մեթոդաբանական հիմքը և տեսական բազան, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները, ներկայացված են հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը :

Ատենախոսության **առաջին գլխում,** որը վերնագրված է **«Անչափահասների հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը»,** վերլուծության են ենթարկվել 1993-2016 թթ. ընդգրկող ժամանակահատվածում անչափահասների հանցավորության վիճակը, ինչպես նաև անչափահասների շեղվող վարքագծի բնութագիրը ՀՀ-ում: Անդրադառնալով հանցավորության վիճակի գնահատմանը՝ հեղինակը նշում է, որ ՀՀ-ում հանցավորությունը, 100.000 բնակչի հարաբերակցությամբ գործակիցներով, 1993 թ.-ի համեմատ աճել է 1,8 անգամ (1993 թ.-ին՝ գործակիցը եղել է 349.2, իսկ 2016 թ.-ին՝ 628.3), իսկ անչափահասներինը՝ 1.1 անգամ (1993 թ.-ին՝ գործակիցը 11.7, իսկ 2016 թ.-ին՝ 12.6): ՀՀ Ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի տրամադրած տվյալների համաձայն՝ 1993-2016 թթ.-ին ՀՀ-ում անչափահասների հանցավորության մասնաբաժինը ընդհանուր հանցավորության մեջ տատանվել է՝ կազմելով 2-ից 7%, 1993 թ.-ի համեմատ 2016 թ.-ին նկատվել է ընդհանուր հանցավորության կառուցվածքում անչափահասների հանցավորության մասնաբաժնի կտրուկ նվազում՝ 3.3%-ից դառնալով 2%: Նման կտրուկ նվազումը, հեղինակի կարծիքով, անչափահասների հանցավորության առավել լատենտայնացման, ինչպես նաև բնակչության շրջանում անչափահասների համամասնության կտրուկ նվազման արդյունք է (2003-2015 թթ-ին ՀՀ բնակչության մեջ 15-19 տարեկանների համամասնությունը կտրուկ նվազել է՝ 9.9%-ից դառնալով 5.9%): Դիտարկելով անչափահասների հանցագործությունների բաշխումը նրանց տարիքային խմբերում՝ հեղինակը նշում է, որ 2015 թ.-ին այդ հարաբերակցությունը կազմել է 0.21424, իսկ 2003 թ.-ին՝ ընդամենը 0.00172, հետևաբար անչափահասների հանցաոր ակտիվությունը իրականում չի նվազել:

Ուսումնասիրելով անչափահասների հանցավորության կառուցվածքը՝ հեղինակը հանգում է հետևության, որ 2003-2015 թթ.-ի անչափահասների կողմից բռնությամբ կատարվող հանցագործություններն կառուցվածքային

առումով աճել են գրեթե 2 անգամ, իսկ այդ ֆոնի հիման վրա շահադիտականի մասնաբաժինը նվազել է: Ինչպես պաշտոնական վիճակագրության տվյալներով, այնպես էլ հեղինակի կողմից կատարված հետազոտությունների արդյունքներով՝ երեխաների շրջանում արձանագրվել է բռնի վարքագծի տարածում, ընդ որում՝ հաճախ զենքի կամ որպես զենք ծառայող առարկաների գործադրմամբ (ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2003-2015 թթ. գրանցվել են անչափահասների կողմից ավազակությունների կատարման 100 դեպք, որոնցից 37-ի պարագայում կիրառվել է զենք կամ որպես զենք ծառայող առարկա):

Ատենախոսը փաստում է ՀՀ-ում իգական սեռի անչափահասների հանցավոր վարքագծի ակտիվացման հանգամանքը. 2003 թ.-ին քրեական պատասխանատվության ենթարկված անչափահասների ընդհանուր զանգվածում իգական սեռի ներկայացուցիչների մասնաբաժինը 2,5%-ից , 2015 թ.-ին աճել է 8,3%-ի: Նույն ժամանակահատվածում գրանցվել է խմբի կազմում հանցանքի կատարման համամասնության նվազում, ինչն էլ վկայում է անչափահասների ինքնուրույն հանցավոր վարքագծի ակտիվացման մասին:

Հեղինակը վերլուծության է ենթարկում նաև ՀՀ-ում անչափահասների շեղվող վարքագծի առանձնահատկությունները: Հիմնվելով 2006 և 2014 թթ.-ին դպրոցականների շրջանում իր կատարած հետազոտությունների արդյունքների վրա՝ նշում է, որ ՀՀ-ում երեխաները ավելի քիչ են շեղվող վարքագիծ դրսևորում կամ վիկտիմիզացիայի ենթարկվում, քան եվրոպական երկրների մեծամասնությունում բնակվող իրենց հասակակիցները, սակայն հայ երեխաների կողմից բարձր է բռնի վարքագիծ դրսևորելու, ինչպես նաև դրանից տուժելու (այդ թվում՝ ծնողներից) հաճախականությունը: ՀՀ-ում մեծ թիվ են կազմում իրենց կյանքի ընթացքում երբևիցե ալկոհոլ գործածած անչափահասները, սակայն հարբածության վիճակում հայտնվածների թիվը շատ փոքր է: ՀՀ-ում ալկոհոլը էական հանցածին ազդեցություն չունի, ինչը հաստատվում է նաև ՀՀ պաշտոնական վիճակագրությամբ՝ 2003 թ.-ին հանցանք կատարած անչափահասների 3.9%-ը հանցանքի կատարման պահին գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ, մինչդեռ 2015 թ.-ին 0%:

Փոխարենը, հեղինակի պնդմամբ, ՀՀ-ում նկատվում է թմրամիջոց գործածող անչափահասների թվաքանակի աճ, ինչի պատճառներից մեկը

Իրանի հետ սահմանների բացումն է, որն էլ հնարավորություն ընձեռեց Իրանից ՀՀ թմրանյութերի ապօրինի ներթափանցման համար: 2003 թ.-ի համեմատ 2015 թ.-ին 3.7 անգամ աճել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության պաշտոնապես գրանցված դեպքերը՝ 134-ից դառնալով 492:

Ատենախոսության երկրորդ՝ «Հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի կրիմինալոգիական բնութագիրը» գլխում հեղինակը քննարկում է հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի սոցիալ-ժողովրդագրական, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական և մոտիվացիոն առանձնահատկությունները:

Վերլուծելով հանցանք կատարած անչափահասների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը, հեղինակը նշում է, որ ՀՀ-ում հանցավոր և շեղվող վարքագիծ առավելապես դրսևորում են տղաները (2015թ.-ին նրանք 12 անգամ ավելի հաճախ են հանցանք կատարել), թեև 2003-2015թթ.-ին նկատվում է իգական սեռի անչափահասների հանցավոր ակտիվության գրեթե 3 անգամյա աճ: Հեղինակի հետազոտութունների համաձայն՝ տղաները՝ աղջիկների համեմատ 3 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել, 4 անգամ հաճախ՝ զենք կրել, գրեթե 6 անգամ հաճախ՝ բռնությամբ զուգորդված արարք կատարել, առողջությանը վնաս պատճառել, 13 անգամ հաճախ՝ խմբային կռիվների մասնակցել, 17 անգամ հաճախ՝ գողություն կատարել, 4 անգամ հաճախ՝ թմրանյութ գործածել:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ առավել բարձր կրիմինալ ակտիվություն դրսևորելեն 16-17 տարիքային խմբի ներկայացուցիչները, ինչը, ըստ հեղինակի, պայմանավորված է ոչ թե նրանով, որ 16 տարին չլրացած երեխաները ավելի օրինապահ են (ISRD-3 ուսումնասիրության համաձայն՝ ՀՀ-ում շեղվող վարքագծի դրսևորում առավելապես գրանցվել է մինչև 15 տարիքային խմբի ներկայացուցիչների կողմից), այլ, նախ՝ 14 տարեկանների համար պատասխանատվություն սահմանված է սահմանափակ թվով արարքների համար, բացի այդ՝ նրանց կողմից կատարված արարքներն առավել բարձր լատենտայնությամբ են օժտված. հասարակության անդամները, դպրոցն ու ընտանիքը ամեն կերպ ձգտում են զերծ պահել ցածր տարիքային խմբի երեխաներին իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում հայտնվելուց, քրեահրավական օրենսդրության դաշտ տարվելուց, դրան հետևող ստիգմատիզացիայից և փորձում են ինքնուրույն արձագանքել նրանց կողմից կատարված ոտնձգություններին:

Հեղինակի ուսումնասիրությունների համաձայն՝ շեղվող վարքագիծ առավել հաճախ դրսևորել են լիարժեք ընտանիքներում մեծացող և դաստիարակվող անչափահասները, ինչը, հեղինակի կարծիքով, առավելապես պայմանավորված է երեխայի նկատմամբ ծնողների, տատիկների ու պապիկների անմնացորդ նվիրվածությամբ, երեխային ամեն գնով պաշտպանելու ձգտումով, ինչն էլ նրա մոտ անպատժելիության և ամենաթողության զգացում է ձևավորում:

Առավել մտահոգիչ են, ըստ հեղինակի, երեխաների պահանջմունքների և արժեքային ոլորտում տեղ գտած փոփոխությունները, քանի որ երեխաների մեծամասնության համար ներկա ժամանակաշրջանում երջանիկ կյանքի, հարգանքի արժանանալու, ինքնահաստատման կարևորագույն նա-

խադրյալներից մեկը նյութական ապահովվածությունն է, իսկ հոգևոր արժեքներին հաղորդակցվելու, ինքնակատարելագործման պահանջմունքները հետին պլան են մղվում ինչպես հանցանքներ կատարած անձանց, այնպես էլ օրինապահ քաղաքացիների կողմից:

Ատենախոսը նշում է, որ անչափահասների արժեք-միջոցների համակարգում ավանդաբար առաջնային դիտվող ազնվությունը, ճշտախոսությունը, դաստիարակվածությունը, ինքնատիրապետումն ու հարգանքն այլ անձանց, հատկապես մեծահասակների նկատմամբ, իրենց տեղը զիջում են ձեռներեցությունը, նյութական միջոցների ձեռք բերման նպատակով՝ խաբեությունը արդարացնելուն, ընկերներին մոլորեցնելուն: ISRD-3 հետազոտության մեջ ընդգրկված երեխաների 23,9 %-ի կարծիքով, մեծերին խաբելը ամոթալի չէ, ավելին՝ արդարացված է: Ընդ որում, շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում այդ ցուցանիշը գրեթե երկու անգամ ավելի մեծ է:

Երեխաների շրջանում բարձր է պատասխանատվության անխուսափելիության հանդեպ թերահավատության մակարդակը, որում էական դերակատարություն ունի կոռուպցիայի տարածումը, այդ թվում՝ դպրոցում:

Ուսումնասիրելով անչափահասների ինքնավերահսկման մակարդակի ազդեցությունը շեղվող վարքագծի դրսևորման վրա՝ հեղինակը փաստում է, որ ՀՀ-ում մեծ թիվ են կազմում այն երեխաները, ովքեր իրենց վարքագիծն իրականացնում են պահի ազդեցությամբ (69%): Ընդ որում, ռիսկի դիմելու բարձր մակարդակ ունեցողները ռիսկի դիմելու ցածր մակարդակ ունեցողների համեմատ գրեթե 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորում:

Հեղինակը վերլուծության է ենթարկում երեխաների հեդոնիստական հակվածության ազդեցությունը նրանց կողմից շեղվող վարքագծի դրսևորման վրա, և նշում, որ առկա է ուժեղ արտահայտված կոռելյացիա հեդոնիստական հակվածության բարձր մակարդակի և շեղվող, հատկապես բռնի վարքագծի դրսևորման միջև:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները», հեղինակն անդրադառնում է երեխայի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում ընտանիքի, դպրոցի (ուսումնական հաստատության), ընկերական միջավայրի, հասարակական միկրոմիջավայրի դերի, ազդեցության քննարկմանը:

Ընտանիքը և հատկապես՝ երեխան, մեր հասարակության մեջ մշտապես դիտարկվել են որպես բարձրագույն արժեք, սակայն, ըստ հեղինակի, ՀՀ-ում ընթացող ճգնաժամային երևույթները՝ աղքատությունը, գործազրկությունը, արտագաղթը, ժողովրդագրական բացասական փոփոխությունները,արժեքային անոմիայով պայմանավորված՝ բարոյական մի շարք նորմերի անտեսումն ընդունելի համարելը հանգեցրել են հասարակության մի մասի մոտ ընտանիքի ինստիտուտի արժեզրկման, ինչը դրսևորվեց ոչ միայն ամուսնալուծությունների աճով, այլև ծնողների և երեխաների միջև հուզական կապի թուլացմամբ:

Ատենախոսի կարծիքով աղքատությունը, նյութական վատ պայմանները, գործազրկությունը ազդում են երեխայի ասոցիալ վարքի ձևավորման վրա, սակայն դա ոչ թե պայմանավորված է նյութական միջոցների քանակով, այլ ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտում տեղ գտնող փոփոխություններով. ընտանիքում լարված մթնոլորտի, ծնողների մոտ՝ «անլիարժեքության» բարդույթի, ընկճվածության, օտարվածության, ֆրուստրացիայի, ագրեսիվության ձևավորմամբ, որոնք էլ տեղակալվում են երեխաների վրա:

Հեղինակը կատարված վերլուծության արդյունքում փաստում է, որ սպառման բարձր մակարդակ ունեցող ընտանիքների երեխաները՝ ի համեմատ մյուսների ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորում. նրանք 1,3 անգամ ավելի հաճախ են ներգրավվել խմբային կռիվների, 1,5 անգամ՝ զենք կրել, 5 անգամ՝ շորթում կամ կողոպուտ կատարել, ինչի բացատրությունը, թերևս, անպատժելիության զգացումն է, վստահությունը, որ ընտանիքի նյութական լավ վիճակը հնարավորություն կտա իրենց ցանկացած պարագայում խուսափել պատասխանատվությունից: Բացի այդ, ապահովվածության բարձր մակարդակ ունեցող ընտանիքներում, որպես կանոն, ծնողի կամ ծնողների ավելի մեծ զբաղվածության պարագայում, թույլ է ծնողական հսկողությունը, երեխայի հանդեպ ջերմությունը հաճախ դրսևորվում է ոչ թե նրա կյանքով հետաքրքրվելով, այլ նրան նվերներ տալով:

Հեղինակը, հիմնվելով ISRD-2 և ISRD-3 ուսումնասիրությունների վրա, նշում է, որ հասարակություն տեղ գտած ճգնաժամային երևույթներն անդրադարձել են հայ ընտանիքների վրա, տեղի է ունեցել ծնողների և երեխաների միջև հուզական կապի թուլացում. 2006 թ.-ին հարցված երեխաների 1,1%-ն էր նշել հոր հետ ունեցած վատ հարաբերությունների մասին, մինչդեռ 2014 թ.-ին՝ արդեն 2,4%-ը, մոր հետ վատ հարաբերությունների մասին հայտնել էր 2006 թ.-ին հարցվածների 0,7, իսկ 2014 թ.-ին՝ 1,1%-ը: Ընդ որում, ընտանիքի հետ թույլ հուզական կապ ունեցող երեխաները ավելի քիչ են հակված իրենց կյանքի, խնդիրների մասին պատմել ծնողներին և ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորում՝ 2 անգամ ավելի հաճախ են գրաֆիտի, վանդալիզմ, մանր գողություն կատարում, խմբային կռիվների ներգրավվում, 1,2 անգամ հաճախ՝ բռնի վարքագիծ դրսևորում:

Վերլուծության ենթարկելով ծնողների հսկողության ազդեցությունը երեխաների շեղվող վարքագծի դրսևորման վրա՝ հեղինակը նշում է, որ ծնո-

ղական թույլ վերահսկողության ներքո եղած երեխաները՝ ի համեմատ ուժեղ վերահսկողության ենթարկվածների, 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորում, բռնություն գործադրում, 7,5 անգամ հաճախ՝ սեփականության դեմ ուղղված հանցանք կատարում:Ուշագրավ բացահայտում է արված հեղինակի կողմից, ինչից հետևում է, որ թեև ՀՀ ծնողները հիմնականում տեղեկացված են, թե տանից բացակայելիս, երեխան որտեղ է գտնվում և ում հետ, սակայն երեխայի կյանքով իրական հետաքրքրվածության մակարդակը ցածր է: ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ՀՀ-ում հարցված երեխաների 93,1%-ն էր նշել, որ ծնողները տեղյակ են, թե իրենք որտեղ են գտնվում, 90,4%-ը՝ թե ինչով են զբաղված, սակայն միայն 86%-ն էր նշել, որ ծնողները հետաքրքրվում են, թե տանից դուրս գտնվելիս, երեխան իրականում ինչո՞վ է զբաղվել, որտե՞ղ է եղել և ու՞մ հետ: Ավելին, հարցվածների 9,1%-ը նշել էր, որ ծնողները երբեք էլ այդ առումով իրապես չեն հետաքրքրվում:

Հեղինակի կարծիքով, երեխայի ընկերներին իմանալը թե՛ կրիմինոգեն, թե՛ վիկտիմոգեն առումով էական կանխարգելիչ նշանակություն ունի. այն երեխաները, ում ծնողները մշտապես տեղյակ են, թե երեխան ում հետ է շփվում, 3,7 անգամ ավելի քիչ են հաղորդել խմբային կռիվների մասնակցելու, 6,5 անգամ՝ զենք կրելու, 8,9 անգամ՝ ուրիշի առողջությանը վնաս պատճառելու, 5 անգամ՝ հակերությամբ զբաղվելու, 7 անգամ՝ թունդ ալկոհոլ գործածելու, 3 անգամ՝ իր առողջությանը ուրիշի կողմից վնաս պատճառվելու մասին:

Ատենախոսի կողմից ուշադրություն է դարձվում նաև նրան, թե որքանով են ծնողները հետևում, թե երեխան ինչ ֆիլմեր է նայում կամ ինչ վեբկայքեր է հաճախում: ՋԼՄ-ներով, ֆիլմերով, համացանցով փոխանցվող տեղեկատվությունը՝ բռնության, սարսափի տեսարանների, պոռնոգրաֆիայի ցուցադրումը, գողական աշխարհի ռոմանտիկայի տարածումը անդրադառնում է երեխայի ձևավորման գործընթացի և հետագա վարքագծի վրա, մինչդեռ ՀՀ-ում հարցված երեխաների միայն 64,5%-ի ծնողներն են հետևում թե երեխան իրականում ինչով է զբաղվում:

Երեխայի շեղվող վարքագծի կանխարգելման գործընթացում կարևորելով ծնողական դաստիարակության դերակատարությունը՝ հեղինակը նշում է, որ այսօր դաստիարակման ոլորտում առկա ամենալուրջ խնդիրը ծնողների և երեխաների կողմից երկուստեք ընդունելի համարվող արժեքային տարբեր կողմնորոշումներն են: Այսօրվա դեռահասների ծնողները, դաստիարակություն են ստացել Խորհրդային Միության ժամանակ ընդունելի համարվող արժեքային համակարգով, մինչդեռ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո բախվելով ի հայտ եկած նոր արժեքներին, որոնցից շատերն իրենց համար պարզապես ընդունելի չեն, նրանք հայտնվեցին կազուսային իրավիճակում.

կա՛մ երեխաներին դաստիարակել նոր, իրենց համար անընդունելի արժեքային համակարգով, որը, սակայն երեխաներին թույլ կտա գոյատևել և առաջ շարժվել ձևավորված նոր հասարակական հարաբերություններում, կա՛մ երեխաներին սերմանել այն արժեքները, որոնք իրենց կարծիքով, ավելի ճիշտ են, հիմնավոր: Վերջին դեպքում, երեխաների մոտ է ձևավորվում արժեքային անորոշություն. ծնողների կողմից սերմանվող արժեքները, որոնք պետք է օգնեին իրենց զարգանալ, ընդունվել հասարակության կողմից, իրականում ցանկալի արդյունքը չեն տալիս: Ծնողների սերմանածը և իրականությունը հակադրվում են, երեխայի մոտ առաջանում է ներքին կոնֆլիկտ, որն էլ իր հանգուցալուծումն է ստանում առաջադրված հարցերի պատասխանը ինքնուրույն կամ հասակակիցների շրջանում փնտրելով, հաճախ հանգեցնում ծնողների հետ կոնֆլիկտների::

Քննարկելով դպրոցի դերակատարությունը երեխայի շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում, հեղինակը նշում է, որ ներկայումս դպրոցներում ավելի հաճախ կարելի է հանդիպել ուսուցչի անտարբերության, երեխաների հանդեպ խտրական մոտեցման, ուսուցչական կազմի մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակի, տարրական հոգեբանական գիտելիքների չտիրապետելու, աշակերտի հանդեպ հոգեբանական և նույնիսկ ֆիզիկական բռնության գործադրման, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են ունենում երեխայի հոգեբանական առանձնահատկությունների, արժեքային համակարգի, իրավագիտակցության, վարքագծային մոդելների ձևավորման վրա: Հեղինակի կողմից իրականացված հետազոտության արդյունքների համաձայն՝ դպրոցի հանդեպ վատ վերաբերմունք ունեցող երեխաները գրեթե 2 անգամ ավելի հաճախ են զենք կրում, խմբային կռիվների ներգրավվում:

Երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորման վրա, ըստ հեղինակի, ազդեցություն ունի դպրոցում թմրանյութի, խմբային կռիվների, հանցագործությունների տարածվածությունը. դպրոցում վատ միջավայրի առկայությունը 1,5 անգամ բարձրացնում է երեխայի կողմից շեղվող, 1,8 անգամ՝ բռնի վարքագծի դրսևորման հաճախականությունը:

Առաջադիմությունը և դպրոցից բացակայությունները ևս կարևորվում են երեխայի շեղվող վարքագծի հավանականությունը գնահատելիս: Մասնավորապես, հեղինակը նշում է, որ ՀՀ-ում հարցվածների շրջանում՝ ցածր առաջադիմություն ունեցող երեխաները 1,5 անգամ ավելի հաճախ են բռնի վարքագիծ դրսևորել: ՀՀ-ում դպրոցից անհարգելի բացակայած երեխաները գրեթե 2 անգամ ավելի հաճախ են շեղվող, այդ թվում՝ բռնության գործադրմամբ վարքագիծ դրսևորել, 2,5 անգամ հաճախ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություն կատարել: Ընդ որում, հեղինակի կողմից իրականացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ՀՀ-ում երե-

խաները հաճախ են դպրոցից անհարգելի բացակայում՝ 48,5%:

Հեղինակի կարծիքով, դպրոցը թերանում է երեխային իր ապագայի առումով կողմնորոշելու գործառույթն իրականացնելիս. ի համեմատ 2006 թ.-ի՝ ավելի մեծ թվով երեխաների մոտ է առկա անորոշություն ապագայի հանդեպ. 2006 թ.-ին հարցվածների 15,2%-ն էր նշել, որ չի կողմնորոշվում, թե ինչով է զբաղվելու դպրոցն ավարտելուց հետո, մինչդեռ 2014 թ.-ին՝ 24,4%: Մինչդեռ, ապագայի հանդեպ անորոշությունը բարձրացնում է շեղվող վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

Անչափահասների շեղվող վարքագիծը դետերմինացնող գործոններից է ընկերական միջավայրը.հեղինակի կողմից կատարված ուսումնասիրության համաձայն՝ ընկերների հետ ազատ ժամանցն անցկացնող երեխաները 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորում՝ գրաֆիտի, վանդալիզմ, մանր գողություն կատարում, գրեթե 3 անգամ հաճախ՝ բռնություն գործադրում, քանի ընտանիքի հետ ժամանցն անցկացնել նախընտրողները: Ընդ որում, ընկերների կայուն խումբ ունեցող անչափահասները ՀՀ-ում 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել, շեղվող վարքագծի դրսևորմանն առավել հաճախ են ներգրավվել այն երեխաները, ում պնդմամբ, իրենց ընկերական խմբում արդարացված, ընդունելի է համարվում ապօրինի արարքների կատարումը կամ դրանք փաստացի կատարվում են:

ISRD-2 և ISRD-3 ուսումնասիրությունների համեմատության արդյունքում՝ հեղինակը փաստում է, որ 2006 թ.-ին հարցվածների 57,1%-ն, իսկ 2014 թ.-ին՝ արդեն 64,7%-ն էր նշել, որ նախընտրում է ժամանցն անցկացնել սրճարաններում, բարերում, համապատասխանաբար՝ 3,9 և 8,5%-ը՝ ազատ ժամանցի ընթացքում ալկոհոլ, թմրանյութ գործածելու, 10,9 և 12,6%-ը՝ հաճույքի համար մարդկանց հետապնդելու, վախեցնելու մասին: Ի համեմատ 2006 թ.-ի՝ 2014 թ.-ին երեխաները գրեթե 1,4 անգամ ավելի հաճախ են նշել երեկոյան ժամերին տանից դուրս գալու, ընկերների հետ ժամանակ անցկացնելու մասին, ընդ որում, երեկոյան ժամերին դուրս եկող, ընկերների հետ ժամանակ անցկացնող անչափահասները ՀՀ-ում 2.4 անգամ ավելի հաճախ են հաղորդել շեղվող վարքագիծ դրսևորելու, 3.2 անգամ հաճախ՝ բռնությամբ զուգորդված արարք կատարելու մասին:

Կարևոր խնդիրներից մեկը վերաբերում է ՀՀ-ում երեխաների ազատ ժամանցի ոլորտի կազմակերպմանը, որը հեղինակի պնդմամբ, հիմնականում թողնված է ինքնահոսի: Միևնույն ժամանակ, հեղինակի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ՀՀ-ում ժամանցի ոլորտի վատ կազմակերպման խմբի մեջ ներառված երեխաները՝ ի համեմատ իրենց հասակակիցների, 2.4 անգամ ավելի հաճախ են շեղվող, գրեթե 7 անգամ հաճախ՝ բռնի վարքագիծ դրսևորել, 4 անգամ հաճախ՝ գողություն կատարել:

Ատենախոսը գտնում է, որ ՀՀ-ում երեխայի շեղվող վարքագծի ձևավորման վրա առանցքային ազդեցություն է գործում նրա միջավայրում թմրանյութ գործածած, բռնություն գործադրած, գողություն կամ ավազակություն կատարած ընկերոջ առկայությունը, ինչը մի քանի անգամ բարձրացնում է երեխայի կողմից շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

Անչափահասների շեղվող վարքագծի ձևավորման վրա ազդեցություն գործող գործոններից է հարևանությունը, մասնավորապես՝ հարևանների կողմից իրականացվող սոցիալական հսկողությունը: Հեղինակը, հիմնվելով իր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքների վրա, նշում է, որ վերջին տասնամյակում նկատվում է հարևանների կողմից իրականացվող սոցիալական հսկողության թուլացում. 2006 թ.-ին հարցված երեխաների 57,6%-ը նշել էր, որ հարևանները ուշադիր ու հետևողական են, մինչդեռ 2014 թ.-ին՝ դառնալով 43,1%:

Ըստ հեղինակի, երեխայի շեղվող վարքագծի հաճախականությունը սկսում է նվազել, երբ, երեխայի կարծիքով, հարևանները պատրաստակամ են օգնության հասնելմարդկանց. այն անչափահասները, ովքեր նշել էին հարևանների օգնության հասնելու պատրաստակամության մասին՝ 4 անգամ ավելի հազվադեպ էին նշել գողություն կատարելու, 1,2 անգամ՝ զենք կրելու, 4,8 անգամ՝ ավտոմեքենային ապօրինի տիրանալու, 1,3 անգամ՝ անձի առողջությանը վնաս պատճառելու մասին: Անչափահասի վարքագծային դիրքորոշման համար, ատենախոսի կարծիքով, կարևոր նշանակություն ունի այն, որ երեխան հարևանին դիտարկում է ոչ թե որպես պասիվ վարքագիծ դրսևորող, այլ ակտիվ վարքագծի պատրաստ սուբյեկտ:

Երեխայի վարքագծի վրա իր ազդեցությունը, ըստ ատենախոսի, ունենում է նաև այնպիսի հարևանությամբ ապրելը, որտեղ տարածված են կռիվները, հանցանքներն ու թմրանյութերը: Մասնավորապես, նման անբարենպաստ հարևանությամբ բնակվող երեխաները ավելի հաճախ են ենթարկվել վիկտիմիզացիայի և ավելի հաճախ՝ շեղվող վարքագիծ դրսևորել:

Ատենախոսության չորրորդ՝ «Անչափահասների հանցավորության կանխարգելումը ՀՀ-ում» գլխում ատենախոսի կողմից քննարկվում է անչափահասների հանցավորությանն արձագանքելու արդի վիճակը ՀՀ-ում, ինչպես նաև առաջարկություններ են ներկայացվում անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողություն սահմանելու արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Ատենախոսը, քննարկելով ՀՀ-ում անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու հիմնական տարբերակները, փաստում է, որ ՀՀ-ում առավել հաճախ կիրառվում է ազատազրկում, որն էլ պայմանականորեն չի կիրառվում: Հեղինակի կարծիքով, դա առավելապես կապված է ՀՀ գործող

քրեական օրենսգրքում երեխաների հանցավոր արարքներին արդյունավետ արձագանքելու մեխանիզմների բացակայության, օրենսդրության մեջ առկա կանոնակարգումների թերությունների հետ: Ըստ հեղինակի, տուգանքի կիրառումը հաճախ անիմաստ է՝ երեխայի ինքնուրույն վաստակի կամ բռնագանձման ենթակա գույքի բացակայության, հանրային աշխատանքներինը՝ դրա երկար տևողության և որպես ազատազրկմանը այլընտրանք նախատեսված լինելու պատճառով: Կալանք և ազատազրկում պատժատեսակների կիրառումը ևս խնդրահարույց է ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում, քանի որ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների հոդված 17.1-ի համաձայն՝ անչափահաս իրավախախտին կարելի է ազատազրկել, եթե միայն նա մեղավոր է ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու մեջ, եթե բացակայում է ներգործության այլ համապատասխան միջոցը: Ուստի հեղինակն առաջարկում է անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի համակարգում նախատեսել ազատության սահմանափակում, որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պատժատեսակները, հստակեցնել ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող միջոցների կիրառման հիմքերը:

Հեղինակը քննարկում է անչափահասների նկատմամբ ազատազրկում պատժատեսակի կիրառման ժամանակ տեղ գտնող խնդիրները՝ նշում, որ թերացումներ են առկա երեխաների կրթության իրավունքի, զբաղվածության, օրվա հագեցվածության, վերականգնողական միջոցառումների բովանդակային զանազանության ապահովման առումով:

Հիմնվելով իր կատարած ուսումնասիրությունների վրա՝ հեղինակը նշում է, որ երեխաների մոտ առկա է վստահության պակաս իրավապահ մարմինների, առաջին հերթին՝ ոստիկանության հանդեպ. երեխաների մի մասը նրանց համարում է կոռումպացված, սուբյեկտիվ, արդարության զգացումից զերծ:

Անդրադառնալով այն միջոցառումներին, որոնք անհրաժեշտ է իրականացնել անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով՝ հեղինակը կարևորում է՝ այն միջոցառումները, որոնք ուղղված են՝ **1.**աղքատության, գործազրկության նվազեցմանը, **2.**կոռուպցիայի կանխարգելմանը, **3.** իրավագիտակցության բարձրացմանը՝ **4.** հանցավորության լատենտայնությունը նվազեցնելուն, **5.** պատժի արդյունավետությունը բարձրացնելուն, **6.** իրավապահ մարմինների և դատարանի գործունեությունը բարելավելուն, **7** անչափահասների ազատ ժամանցի ոլորտը կանոնակարգելուն, **8.** ընտանիքում առկա խնդիրների կանոնակարգմանը, **9.** դպրոցում առկա խնդիրները նվազեցնելուն

10. վիկտիմոլոգիական կանխարգելում իրականացնելուն:

Ատենախոսության ***եզրակացության*** մեջ հեղինակն արել է ներքոհիշյալ եզրահանգումները, բերել համապատասխան առաջարկություններ:

1. Թեև ՀՀ-ում պաշտոնապես գրանցվում է անչափահասների հանցավորության նվազում, սակայն դա ոչ թե կապված է իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքի, անչափահասների արժեքային համակարգի, բարոյական հայացքների բարելավման, այլ անչափահասների հանցավոր վարքագծի լատենտայնության մեծացման և բնակչության զանգվածում անչափահասների մասնաբաժնի նվազման հետ: Հետևաբար՝ անչափահասների հանցավորությունը ոչ թե նվազում է, այլ դառնում առավել լատենտային:

2. Անչափահասների հանցավորությունը ենթարկվում է որակական փոփոխությունների. անչափահասների շրջանում ավելանում է ինքնուրույն հանցավոր վարքագիծը, աճում է իգական սեռի ներկայացուցիչների հանցավոր ակտիվությունը, անչափահասների շրջանում առավել հաճախ է ապօրինի կերպով զենք շրջանառվում:

3. Թեև ՀՀ անչափահասները եվրոպական շատ երկրների համեմատ ավելի քիչ են շեղվող վարքագիծ դրսևորում և վիկտիմիզացիայի ենթարկվում, սակայն իրենց եվրոպացի տարեկիցներից ավելի հաճախ են նախընտրում բռնություն գործադրել:

4. Անչափահասների կողմից գողությունների կատարման դինամիկան նվազման միտում չունի, հետևաբար ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված պաշտոնական վիճակագրությունը չի արտացոլում անչափահասների կողմից գողությունների կատարման իրական վիճակը և ընդամենը վկայում է դրանց լատենտայնացման մասին:

5. Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում տեղ գտած բացասական փոփոխությունները՝ հատկապես՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումը, հասարակության խիստ բևեռացումը, գրեթե համատարած բնույթ կրող աղքատությունը, գործազրկությունը, արժեքային անոմիան, զուգակցվելով Իրանի հետ ՀՀ սահմանների բացման, թմրանյութերի գործածման համար քրեական պատասխանատվության վերացման հետ՝ հանգեցրին ՀՀ-ում թմրանյութ գործածողների, այդ թվում թմրանյութ գործածող անչափահասների թվաքանակի աճի:

6. Գլոբալիզացման գործընթացներում ՀՀ-ի ներգրավվածությունը, կանանց էմանսիպացիան, ֆեմինիստական գաղափարախոսության տարածումը հանգեցրել են կանանց մասնակցության ակտիվացմանը ոչ միայն հասարակական-քաղաքական կյանքում, այլև իրավախախտումների կատարման ոլորտում, ինչը դրսևորվում է նաև հանցավոր և շեղվող վարքագծին իգական սեռի երեխաների ներգրավվածության մեծացմամբ:

7. Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 14-15 տարիքային

խմբի ներկայացուցիչները 16-17 տարեկան անչափահասների համեմատ գրեթե 5 անգամ ավելի հազվադեպ են քրեական պատասխանատվության ենթարկվում, սակայն դա ոչ թե պայմանավորված է նրանց կողմից քրեական օրենքով արգելված արարքների կատարումից, շեղվող վարքագծի դրսևորումից զերծ մնալով, այլ այս խմբերի համար քրեական պատասխանատվության ենթադրող արարքների տարբեր շրջանակի սահմանումով, ավելի ցածր տարիքային խմբերի երեխաների հանրորեն վտանգավոր արարքների լատենտայնության ավելի բարձր աստիճանով:

8. Հայ ընտանիքներում երեխայի հանդեպ ծնողների, և հատկապես՝ տատիկների և պապիկների անվերապահ նվիրվածությունը, երեխաներին «կուրորեն սիրելը», «երես տալը», մանկավարժական գիտելիքների պակասը, դաստիարակությունն իրականացնելիս չափահասների կողմից միմյանց հակադրվելը ձևավորում է թողտվության մթնոլորտ, նպաստում երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորմանը, ինչի վկայությունը լիարժեք համարվող ընտանիքներում դաստիարակվող երեխաների շեղվող վարքագծի դրսևորմանը ավելի բարձր ներգրավվածությունն է:

9. Ներկա ժամանակաշրջանում հասարակության կարգավորիչ գործառույթի, հասարակական հսկողության թուլացման, կրթական ոլորտում կոռուպցիայի տարածման և դրանով պայմանավորված՝ ուսուցչի մասնագիտության հանդեպ հարգանքի նվազման պարագայում ՀՀ-ում երեխայի ասոցիալ վարքի կանխարգելման առումով նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման գործընթացում նկատվում է դպրոցի և հասարակության դերի նվազում:

10. ՀՀ-ում երեխաների շեղվող վարքագծի, հատկապես դրա հանրային բարձր վտանգավորություն չունեցող ձևերի դրսևորման առումով կարևոր դերակատարություն ունի ինքնավերահսկումը՝ անչափահասի ռիսկային վարքագծի դիմելու պատրաստակամությունը և հեդոնիստական գաղափարներին հետևելը:

11. ՀՀ հասարակական կյանքում տեղ գտած փոփոխությունների, հատկապես սոցիալ-տնտեսական ճգնաժամային ցնցումների հետևանքով ներկա ժամանակաշրջանում նկատվում է անչափահասների արժեքային համակարգի անոմիա, նյութական պահանջմունքների գերակայություն հոգևորի նկատմամբ, երեխաների շրջանում սպառողական հոգեբանության աճ, ինչն անդրադառնում է նաև հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների մոտիվացիոն ոլորտի վրա:

12. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ-ում գրանցվել է երեխաների հետ ծնողների հուզական կապի և ընտանեկան հսկողության թուլացում, ինչն էլ իր անմիջական ազդեցությունն է ունեցել երեխաների շեղվող վարքագծի դրսևորման վրա:

13. Թեև այլ երկրների համեմատ ՀՀ-ում ծնողների մոտ բարձր է երեխաների առօրյայի մասին տեղեկացվածությունը, սակայն այն հաճախ կրում է ձևական բնույթ. օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ ծնողների մոտ բացակայում է երեխայի կյանքով, ձեռքբերումներով, ձգտումներով իրական հետաքրքրվածությունը, երեխային աջակցելը:

14. ՀՀ-ում երեխայի շեղվող վարքագծի ձևավորման դետերմինացնող գործոններից է, ինչպես պետության, այնպես էլ ծնողների թույլ հսկողության հետևանքով, երեխաների շրջանում ԶԼՄ-ներով, համացանցով կամ երեխաներին հասանելի այլ եղանակներով բռնության, պոռնոգրաֆիայի, հակաբարոյական այլ երևույթների տարածումը:

15. Անչափահասի շեղվող կամ հանցածին վարքագծի ձևավորման վրա էական ազդեցություն ունի ծնողների՝ երեխային դաստիարակելու իրենց գործառույթին, մանկավարժական, հոգեբանական գիտելիքներին չտիրապետելը, երեխայի իրավունքները խախտելը:

16. ՀՀ-ում անչափահասների շեղվող վարքագծի դրսևորման վրա վճռորոշ ազդեցություն ունի երեխաների՝ դպրոցից բացակայության բարձր մակարդակը, որը թեև 2006 թ.-ի համեմատ նվազել է, սակայն դեռևս շարունակում է մնալ Եվրոպայում գրանցված բարձր ցուցանիշներից մեկը:

17. Հասարակությունում և կրթական ոլորտում տեղ գտած փոփոխությունների արդյունքում դպրոցը ձախողել է երեխայի ձևավորման առումով կարևոր նշանակություն ունեցող այնպիսի գործառույթի իրականացում, ինչպիսին է ապագայի առումով նրանց կողմնորոշելը: ՀՀ անչափահասների շրջանում, ի համեմատ եվրոպական այլ երկրների, շատ են կազմում ապագայի առումով կողմնորոշում չունեցող անձինք, մինչդեռ ապագայի առումով անորոշությունը բարձրացնում է երեխայի կողմից ապագայում հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը

18. ՀՀ-ում, երեխաների կողմից շեղվող և բռնի վարքագիծ առավելապես դրսևորվում է այն երեխաների շրջանում, ովքեր ձգտում են շփման. նախընտրում են ազատ ժամանցը անցկացնել ընկերական միջավայրում, հետևաբար՝ հավակնում են այդ խմբի անդամների կողմից հավանության արժանանալու, մինչդեռ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ առավել հաճախ կատարվում են ազատ ժամանակը մենակ տնօրինել ձգտող երեխաների կողմից:

19. ՀՀ-ում անչափահասների շեղվող վարքագծի ձևավորման և դրսևորման առումով կարևոր նշանակություն ունի երեխայի կողմից իր ընկերների խմբի՝ հանրային ուղղվածության կամ հակասոցիալական ուղղվածության հետ ասոցացումը. իր ռեֆերենտային խումբը «ասոցիալ» համարող երեխան ավելի բարձր հավանականություն ունի շեղվող վարքագիծ դրսևորելու:

20. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ երեխաները, հասարակութ-

յան ազատականացման և ընտանեկան, սոցիալական հսկողության թուլացման պայմաններում, գրեթե 2 անգամ ավելի հաճախ են ազատ ժամանցն անցկացնում տանից, ընտանեկան հսկողությունից դուրս, այդ թվում՝ երեկոյան ժամերին, ալկոհոլ և թմրանյութ գործածում:

21. ՀՀ-ում սոցիալական հսկողությունը երեխայի շեղվող վարքագծի ձևավորման, դրսևորման առումով կանխարգելիչ ազդեցություն ունի, եթե երեխան գիտակցում է, որ հսկողություն իրականացնողը գտնվում է ոչ թե պասիվ դիտորդի դերում, այլ ամեն պահի կարող է ակտիվություն դրսևորել՝ միջամտել:

22. Երեխայի հարևանությամբ թմրանյութերի, հանցագործությունների, կռիվների տարածվածությունը, լքված շինությունների առկայությունը ՀՀ-ում բարձրացնում է ինչպես երեխայի կողմից շեղվող վարքագիծ դրսևորելու, բռնության գործադրմամբ կամ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ իրականացնելու, այնպես էլ դրանցից տուժելու ռիսկը:

23. ՀՀ-ում երեխայի շեղվող վարքագծի ձևավորման վրա առանցքային ազդեցություն է գործում նրա միջավայրում թմրանյութ գործածած, բռնություն գործադրած, գողություն կամ ավազակություն կատարած ընկերոջ առկայությունը, ինչը մի քանի անգամ բարձրացնում է երեխայի կողմից շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Ընդ որում, երեխայի ընկերական միջավայրում նշված վարքագծի տեսակները դրսևորած ընկերների առկայությունը հանգեցնում է երեխայի կողմից նույնական կամ միաբնույթ արարքների կատարման:

24. Անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի կանխարգելման, դրան արդյունավետորեն արձագանքելու համար հրատապ է ՀՀ գործող քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրության վերանայումը՝ առավելապես երեխայի շահերը, կարիքները հաշվի առնող, միջազգային փաստաթղթերի պահանջներին համահունչ կանոնակարգումներ և ընթացակարգեր նախատեսելու, անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի, քրեաիրավական արձագանքման այլ միջոցների համակարգը իրատեսական և անչափահասի ուղղման, նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու հնարավորություն ունեցող պատժատեսակներով և քրեաիրավական ներգործության այլ միջոցներով համալրելու նպատակով:

25. ՀՀ-ում անհրաժեշտ է ներդնել անչափահասների արդարադատության պահանջները արտացոլող ինստիտուցիոնալ համակարգ՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների տարիքային առանձնահատկություններին տիրապետող, նրանց իրավունքների շրջանակը հստակ պատկերացնող կադրերի, մասնավորապես՝ դատավորների, դատախազների, քննիչների, ոստիկանների, փաստաբանների, քրեակատարողական հիմնարկների, պրոբացիոն ծառայության աշխատակիցների ընտրությանը, անհրաժեշտության դեպքում՝ պատրաստմանն ու վերապատրաստմանը:

26. Անչափահասների շրջանում նկատվում է վստահության պակաս իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ոստիկանության նկատմամբ, հետևաբար միջոցառումներ պետք է ձեռնարկվեն երեխաների և ընդհանուր բնակչության շրջանում իրավապահ մարմինների հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ:

27. Անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողության սահմանումը հույժ անհրաժեշտ խնդիր է, ուստի անհրաժեշտ է մշակել միջոցառումների շրջանակ, որոնք թույլ կտան նվազեցնել անչափահասների հանցավորությունը դետերմինացնող գործոնների բացասական ազդեցությունը և կանխարգելիչ գործառույթ կիրականացնեն: Դրանք պետք է իրականացվեն հետևյալ ուղղություններով՝

ա/ աղքատության հաղթահարում՝ աղքատ երեխաների ընտանիքներին սոցիալական աջակցության ցուցաբերումը, ընդ որում՝ հենց երեխաների խնամքի ու կենսական պահանջմունքների բավարարման համար նախատեսված, մինչև երեխայի 18 տարին լրանալը ամսական կտրվածքով տրվող նպաստների համակարգ ներդնելու եղանակով, անխտիր բոլոր երեխաների համար անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքի նախատեսում,

բ/կոռուպցիայի դեմ պայքար՝ վերանայել ՀՀ օրենսդրությունը՝ դրանում հստակեցնել պետական մարմինների, պաշտոնատար անձանց, երեխաների խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների աշխատակիցների ինչպես լիազորությունների շրջանակը՝ նվազագույնի հասցնելով դրանց հայեցողական դրսևորումները, այնպես էլ պարտականությունները, երաշխավորել պատասխանատվություն այդ պարտականությունների չկատարման համար, կրճատել պետական ուռճացված կառավարման համակարգը, բարելավել պետական մարմինների աշխատակիցների, պաշտոնատար անձանց, երեխաների խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների աշխատակիցների սոցիալական վիճակը, երաշխավորել պետական մարմինների, պաշտոնատար անձանց, երեխաների խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, իրականացնել կրթական-տեղեկատվական ծրագրեր,

գ/ իրավագիտակցության բարձրացում՝ վերանայել ՀՀ օրենսդրությու-

նը՝ դրա նորմերի հստակությունը, արդարացիությունը, կանխատեսելիությունը ապահովելու նպատակով, օրենսդրության պահանջների խախտման դեպքում ապահովել պատասխանատվության անխուսափելիություն, նվազեցնել իրավապահ մարմիններում և դատական համակարգում տեղ գտնող կոռուպցիոն վարքագիծը՝ միևնույն ժամանակ երաշխավորելով քաղաքական ուժերից նրանց անկախությունը և պաշտպանվածությունը, միջոցառումներ ձեռնարկել՝ անչափահասների շրջանում իրավական գիտելիքների տարածումը խթանելու, իրավապահ մարմինների և դատարանի հեղինակությունը, նրանց նկատմամբ վստահությունը բարձրացնելու ուղղությամբ, մանկապարտեզներից սկսած՝ կրթական ծրագրերում ներդնել իրավական կրթության, դաստիարակության բաղադրիչ, դպրոցներում՝ 1-ին դասարանից սկսած ներդնել իրավական ուսուցման դասընթաց,

դ/ լատենտայնության նվազեցում՝ հաղորդվող իրավախախտումների գրանցման նկատմամբ հսկողության ուժեղացում՝ հաղորդված իրավախախտման՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից չգրանցելու փաստի հայտնաբերման դեպքում՝ նրանց խիստ պատասխանատվության ենթարկելով, իրավապահ բոլոր մարմինների, դատարանի համար հասանելի՝ իրավախախտումների գրանցման միասնական համակարգ ներդնել, մտցնել տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման համակարգ՝ հանցավոր վարքագծից տուժելուց ապահովագրվելու պարտադիր համակարգի ներդրման կամ առանձին ֆոնդ ստեղծելու տարբերակով, ինչը կենթադրի տուժողներին փոխհատուցման տրամադրում՝ իրենց հանդեպ կատարված հանցագործության մասին ոստիկանությանը կամ իրավասու այլ մարմնին ներկայացված հաղորդումը հավաստող փաստաթղթի ներկայացման դեպքում.երեխաների հանցավոր կամ շեղվող վարքագծին արձագանքելու իրավական նորմերի վերանայում, պատժին՝ հատկապես՝ ազատազրկմանը այլընտրանք հանդիսացող միջոցների ավելի լայն շրջանակի ներդրում:

ե/ պատժի արդյունավետության բարձրացում՝ վերանայել անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի համակարգը, հստակեցնել անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու ՀՀ գործող քրեական օրենսդրությամբ նախատեսված այլընտրանքային մեխանիզմների կիրառման ընթացակարգը, երաշխավորել քրեակատարողական հիմնարկներում պահվող երեխաների անհատական կարիքները արտացոլող որակյալ կրթությունը, առավելագույն կանոնակարգել և բազմազան դարձնել քրեակատարողական հիմնարկներում պահվող երեխաների ազատ ժամանցի կազմակերպումը, թույլ չտալ նրանց շրջանում «քրեական աշխարհի» գաղափարախոսության տարածումն ու ամրապնդումը, ձևական բնույթ կրող վերականգնողական աշխատանքից անցում կատարել իրականի, դյուրին

դարձնել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ընթացակարգը, հստակեցնել Անկախ հանձնաժողովների լիազորությունների շրջանակը, ընդլայնել պրոբացիոն ծառայության գործառույթների շրջանակը,

զ/ իրավապահ մարմինների և դատարանի գործունեության բարելավում՝ իրավապահ մարմինների տեխնիկական հագեցվածության բարձրացում, հասարակություն-իրավապահ մարմիններ համագործակցության վիճակի բարելավում, հաշվառման վերցված անչափահասների, նրանց ընտանիքների հետ արդյունավետ կանխարգելիչ գործունեության իրականացում, երեխաների ազատ ժամանցի վայրերում, այգիներում, պուրակներում, փողոցներում ոստիկանության պարեկային ծառայության ուժեղացում:

է/ ազատ ժամանցի ոլորտի կանոնակարգում՝ ընդլայնել երեխաների համար նախատեսված, նրանց համար հասանելի, մատչելի սոցիոմշակութային հաստատությունների ցանցը, պետական բյուջեում նախատեսել միջոցներ՝ անապահով ընտանիքների երեխաների՝ սպորտային, մշակութային, ստեղծագործական խմբակներ անվճար մուտքը ապահովելու համար, բոլոր երեխաների համար նախատեսել անվճար մուտք թանգարաններ, պատկերասրահներ, ինչպես նաև տարեկան կտրվածքով նախատեսել 4-5-ական անվճար այցելություն դասական երաժշտության (օպերա, բալետ, համերգ), մանկական համերգի կամ թատրոն, սահմանափակումներ նախատեսել՝ որոշակի հաստատություններում առանց ծնողի ուղեկցության երեխայի գտնվելու առումով, ինտերնետ ակումբներում արգելափակել երեխայի վրա բացասական ազդեցություն թողնող կայքեր անչափահաս հաճախորդների մուտքը, ալկոհոլի վաճառքի բոլոր կետերում ուժեղացնել հսկողությունը երեխաներին ալկոհոլ վաճառելու արգելքի պահպանման նկատմամբ, խստացնել այդ արգելքը խախտելու համար նախատեսվող պատասխանատվությունը, ՁԼՄ-ների նկատմամբ նախատեսել ժողովրդավարական գրաքննություն:

ը/. Ընտանիքում առկա խնդիրները ևս իրենց անմիջական ազդեցությունն են գործում անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի ձևավորման վրա, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երեխաների հետ համատեղ ապրող չափահասներին, հատկապես ծնողներին, մանկավարժական, հոգեբանական տարրական գիտելիքներ տալուն,

9. Անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով կարևոր դերակատարություն ունի դպրոցը, ուսումնադաստիարակչական հաստատությունը, հետևաբար այս ոլորտում առկա խնդիրները նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է՝վերանայել դպրոցական ծրագրերն ու դասագրքերը, հնարավորինս դրանք բեռնաթափել ու հետաքրքիր դարձնել երեխայի համար, իրականացնել միջո-

ցառումներ ուսուցչի հեղինակության բարձրացմանն ուղղությամբ, ինչն, առաջին հերթին, ենթադրում է դպրոցում կոռուպցիայի, մասնավոր պարապմունքների արատավոր պրակտիկայի վերացում, ինչպես նաև ուսուցիչներին քաղաքական գործընթացներից զերծ պահելը, վերացնել երեխաների անհարգելի բացակայությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը, նախատեսել հստակ, ազդեցիկ ներգործության միջոցներ՝ դպրոցից անհարգելի բացակայությունների համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

ա) մենագրություն և ուսումնամեթոդական ձեռնարկ.

1. Մարգարյան Ա, Ավետիսյան Ս., Ասատրյան Հ., Ավագյան Հ., Մելիքյան Ռ., Ղուկասյան Հ., Վարդապետյան.Ա. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ (հատոր 2), Երևան 2003, 487 էջ
2. Գաբուզյան Ա., Մարգարյան Ա., Առաքելյան Ս., Սիմոնյան Տ., Թերզյան Ա., Մխիթարյան Ս., Ղուկասյան Ա., Սերոբյան Ա., Պետրոսյան Մ. Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2010, 104 էջ
3. Մարգարյան Ա. Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2017, 256 էջ

բ) գիտական հոդվածներ

4. Մարգարյան Ա. Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության վիճակը Հայաստանի Հանրապետությունում // Պետություն և իրավունք, թիվ 4(14), Երևան 2001, էջ 74-80:
5. Մարգարյան Ա. Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց սոցիալ-հոգեբանական բնութագիրը // Պետություն և իրավունք, թիվ 2(16), Երևան 2002, էջ 78-88:
6. Մարգարյան Ա. Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցավորության վիկտիմոլոգիական ասպեկտը// Իրավագիտության հարցեր, թիվ 1-2, Երևան 2002, էջ 55-58:
7. Մարգարյան Ա. Շահադիտական-բռնի մոտիվացիայի բնութագիրը// Իրավագիտության հարցեր, թիվ 14, Երևան 2003, էջ 34-41:
8. Габузян А., Маргарян А. Тенденции преступности в Армении в переходный период. Уголовное право и преступность: Развитие в Средней и Восточной Европе. Бохум, 2004, стр. 31-50.
9. Margaryan A., Gabuzyan A., Tendenzen der Kriminalitat in Armenien in der Ubergangszeit. Strafrecht und Kriminalitat Entwicklungen in Mittel-und Osteuropa. Bochum, 2004, pp.31-47

10. Մարգարյան Ա. Անչափահասների շեղվող վարքագծի և վիկտիմիզացիայի առանձնահատկությունները ՀՀ-ում: ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի 75-ամյակին նվիրված գիտ. նյութերի ժողովածու, Եր. 2008, էջ 160-172:
11. Crime and punishment around the world: Asia and Pacific, Volume 3, Armenia. Editor Doris C. Chu, Graeme R. Newman, ABC-Clio, Oxford 2010, p. 13-20.
12. Margaryan A., Gabuzyan A. Juvenile Delinquency in Europe and Beyond (Results of the Second International Self-Reported delinquency Study: Armenia), Springer, London 2010, pp. 369-381.
13. Մարգարյան Ա. Հանցավորության նկատմամբ վախը և վիկտիմիզացիան Հայաստանի Հանրապետությունում// Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, թիվ 135.3, Երևան 2011, էջ 19-41:
14. Մարգարյան Ա. Ընտանեկան բռնությունը ՀՀ-ում. օրենսդրական կանոնակարգման որոշ հիմնախնդիրներ // ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, նվիրված Շահեն Նիկոլայի Պետրոսյանի ծննդյան 100-ամյակին, Երևան 2013, էջ 203-213:
15. Margaryan A. Juvenile delinquency in Armenia. Materials of Conference devoted to the 80th anniversary of the Faculty of Law of the Yerevan State University, Yerevan, YSU Press, 2014, pp. 229-243.
16. Մարգարյան Ա., Անչափահասների պատժի առանձնահատկությունները ՀՀ-ում// Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, թիվ 1(19), Երևան 2016, էջ 41-51:
17. Մարգարյան Ա., Անչափահասների նկատմամբ պատժի և քրեաիրավական ներգործության այլ միջոցների նշանակման առանձնահատկությունները// Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, թիվ 1(22), Երևան 2017, էջ 55-61:
18. Մարգարյան Ա., Անչափահասների հանցավորության վիճակը Հայաստանի Հանրապետությունում (1993-2016 թթ.) // Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, թիվ 2 (23), Երևան 2017, էջ 71-83:
19. Маргарян А. Состояние преступности несовершеннолетних в Республике Армения (1993-2016гг.).//Аграрное и земельное право, N 7, 2017, стр. 129-139.
20. Маргарян А. Уголовно-правовые аспекты наказания несовершеннолетних в Республике Армения.// Образование и право, N 10, 2017, стр. 29-43.
21. Маргарян А. Некоторые проблемы наказания несовершеннолетних в Республике Армения. XIII Державинские чтения в Республике Мордовия. Материалы международной научно-практической конференции, Саранск, 2017, ч. 1, стр 61-71.

АННА РАЗМИКОВНА МАРГАРЯН

КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Тема докторской диссертации посвящена криминологическим проблемам преступности несовершеннолетних в Республике Армения. Актуальность темы обусловлена в первую очередь необходимостью изучения состояния преступности несовершеннолетних в свете тех кризисных явлений, которые произошли в Армении за последние 2-3 десятилетия – рост безработицы и бедность, распад ценностной системы и социальная аномия, отсутствие уверенности в настоящем и веры в будущем, непрерывные реформы и отсутствие доверия к государственным органам, ослабление воспитательного воздействия таких социальных институтов как семья, школа, общество, неурегулированность сферы досуга детей.Все это не могло не отразится негативно на поведении детей.

Хотя согласно официальной статистике, по сравнению с 1993 годом в 2016г. наблюдяеться незначительный рост преступности несовершеннолетних (коэффициент на 100 000 населения вырос с 11.7 до 12.6), однако экспертные оценки, сообщения СМИ, официальные данные о безработице и бедности детей, изменении демографической картины населения дают все основания полагать, что на самом деле идет еще более латентизация преступности несовершеннолетних.

Кроме того, наблюдается рост криминальной активности несовершеннолетних женского пола, детей до 16 лет; детьми чаще применяется насилие и даже с применением оружия.

Целью диссертационного исследования является изучение криминологической характеристики преступности несовершеннолетних в РА с целью разработки эффективных мер борьбы с ней.

Теоретической основой диссертации являются работы отечественных и зарубежных ученых в сфере уголовного и уголовно-исполнительного права, криминологии, психологии, социологии, педагогики. Диссертационное исследование основано на различных научных источниках - монографиях, научных публикациях, диссертациях, учебных пособиях, докладах, научных и практических материалах.

Эмпирический основой диссертации являются результаты анкетирования школьников 12-17 лет в РА в рамках международных исследовательских проектов ISRD-2 (2006г., 2100 респондентов) и ISRD-3 (2014 г., 1060 респондентов), а также проведенные интервью с 9 несовершеннолетними осужденными, отбывающими наказание в пенитенциарном учреждении “Абовян” в 2015-2016 гг.

На основе анализа официальной статистики РА, а также исследований проведенными автором, было выявлено изменение состояние как преступности, так и девиантного поведения несовершеннолетних за последние 20 лет. Было установлено, что криминальная активность детей не снизилась, а стала более латентной, претерпела негативные качественные изменения.Дети стали чаще применять физическое насилие, наносить телесные повреждения, а также употреблять наркотики.

Автором были изучени также социально-демографические, социально-психологические и мотивационные особенности несовершеннолетних проявляющих преступное и девиантное поведение.Было выявлено, что в РА девиантное поведение чаще демонстрируют дети из полных, благополучных семей.

Особое внимание уделяется анализу основных факторов (семья, школа, друзья, соседи), которые воздействуют на формирование преступного или девиантного поведения несовершеннолетних. В РА наблюдается ослабление семейного контроля и эмоциональной связи между родителями и детьми, что приводит к росту девиантного поведения последних. Вдобавок – многие родители не имеют элементарных навыков воспитания детей. Вследствие ослабления семейного, социального контроля и процессов либерализации, почти вдвое выросло число тех детей, которые вечером проводят свободное время вне дома, употребляют алкоголь, что повышает риск их девиантного поведения.Школа также не в состоянии эффективно справится с задачей воспитания детей, она утратила даже такую функцию как оказание содействия детям в определении своих планов после окончания школы.

На оснований результатов исследования, автором предложены ряд мер направленных на предупреждение преступного и девиантного поведения детей.

ANNA MARGARYAN

CRIMINOLOGICAL PROBLEMS OF JUVENILE CRIMINALITY IN THE REPUBLIC OF ARMENIA

RESUME

The criminological problems of juvenile delinquency in the Republic of Armenia are discussed in the frames of this doctoral dissertation. The relevance of the topic is primarily due to the need to study the state of juvenile delinquency in the light of the crisis phenomena that occurred in Armenia over the past 2-3 decades - rising unemployment and poverty, the collapse of the value system and social anomie, lack of confidence in the present and faith in the future, reforms and lack of confidence in state bodies, the weakening of the educational impact of such social institutions as family, school, society, the unsettled state of the children's leisure. This could not but affect negatively the behavior of the children.

Although, according to RA official statistics, when compared to 1993 in 2016, there was a slight increase in juvenile delinquency (the ratio per 100,000 population increased from 11.7 to 12.6), but expert assessments, media reports, official data on the unemployment and poverty of children, changes in the demographic picture of the population give every reason to believe that in fact, there the juvenile delinquency becomes even more latent.

In addition, there has been an increase in the criminal activity of female juveniles, children under the age of 16; children are more likely to use violence and even to use weapons.

The main goal of the dissertation is to study the criminological characteristics of juvenile delinquency in the Republic of Armenia in order to develop effective measures to combat it.

The fundamental works of Armenian and foreign scientists in the field of criminal, penitentiary law, criminology, psychology, pedagogy and sociology create the theoretical basis of the doctoral thesis. The dissertation is based on different scientific sources – monographies, scientific publications, teaching manuals, reports, scientific and practical materials.

The empirical basis of the doctoral thesis is formed by the results of the survey among schoolchildren aged 12-17 in the Republic of Armenia in the framework of international research projects ISRD-2 (2006, 2100 respondents)

and ISRD-3 (2014, 1060 respondents), and interviews with 9 juvenile convicts who were serving their sentences in the Abovyan penitentiary institution in 2015-2016.

Based on the analysis of official statistics of the RA, as well as studies conducted by the author, a change in the state of both criminality and deviant behavior of minors over the past 20 years has been revealed. It was found that the criminal activity of children did not decrease, but became more latent, underwent negative qualitative changes. Children began to use physical violence more often, conduct assault, as well as use drugs.

Socio-demographic, socio-psychological and motivational characteristics of juveniles exhibiting criminal and deviant behavior were discussed by the author. It was revealed that in Armenia deviant behavior is more often demonstrated by children from complete, well-off families.

Particular attention is paid to the analysis of the main factors (family, school, friends, neighbors) that affect the development of criminal or deviant behavior of minors. In Armenia, there is a weakening of family control and emotional support between parents and children, which leads to an increase in the deviant behavior of the latter ones. In addition, many parents do not have elementary skills of raising children. Due to the weakening of family, social control and liberalization processes, the number of children who spend free time out of home and parental control, including in the evenings, drink alcohol has almost doubled. This increases the risk of their deviant behavior. The school is also unable to cope effectively with the task of raising children, it has lost even such function as assisting children in determining their plans after graduation.

On the basis of the results of the study, the author proposed a number of measures aimed at preventing criminal and deviant behavior of children.